ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք,
հասցե՝ Վարդանանց հր. 1
հեռ. (+374312) 22203; 32606,
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 11 >> փետրվարի 2014 թվականի N 19 -Ա

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՓՈՂՈՑ, 9/9Ա ՇԵՆՔ, ԹԻՎ 63 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԳՈՎ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ԲՆԱԿՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի համայնքի Սայաթ Նովա փողոց, 9/9ա շենք, թիվ 63 հասցեով բնակարանը հանդիսանում է Գյումրի համայնքի սեփականությունը: Նշված բնակարանը 2000 թվականից որպես ծառայողական բնակարան տրամադրվել է քաղաքացի Էդվարդ Մանուկյանին՝ ժամանակավոր օգտագործման համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքի կողմից իրականացվում է համայնքապատկան բնակֆոնդի մասնավորեցում նվիրատվության եղանակով և ըստ էության, նշված հասցեով բնակարանը շուրջ 14 տարի բարեխիղճ, բացահայտ և անընդմեջ օգտագործում է քաղաքացի Էդվարդ Մանուկյանի ընտանիքը, նա դիմում է ներկայացրել նշված հասցեով բնակարանը նվիրատվության եղանակով իրեն օտարելու համար:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ մասի, ինչպես նաև Գյումրի համայնքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի <<Հայաստանի Հանրապետության պետական հանրային և համայնքային բնակարանային ֆոնդը դրանց վարձակալներին նվիրելու մասին>> N 46-Ա որոշման 3-րդ կետի դրույթներով՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի համայնքի Սայաթ-Նովա փողոց, 9/9ա շենք, թիվ 63 հասցեով բնակարանը հետայսու չօգտագործել որպես ծառայողական բնակարան, այլ ընդհանուր կարգով՝ որպես համայնքապատկան բնակտարածություն:
2. Գյումրի համայնքի ղեկավարին՝ սահմանված կարգով կազմակերպել Գյումրի համայնքի Սայաթ-Նովա փողոց, 9/9ա շենք, թիվ 63 հասցեով բնակարանի նվիրատվության եղանակով օտարումը քաղաքացի Էդվարդ Մանուկյանին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (16) **Դեմ (1)** **Ձեռնպահ (0)**

Ա.Ադամյան_____ **Լ.Բարսեղյան**_____

Ա.Բաղրամյան_ _ _ _ _ _ _ _ _ _ _ _

Մ.Գաբոյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան_____

Հ.Խաչատրյան _____

Հ.Կարապետյան_____

Տ.Հովհաննիսյան_____

Վ.Հունանյան _____

Ն.Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան_____

Է.Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

2014թ. փետրվարի 11
ք.Գյումրի